

ՈՒՍՈՒՄՆ

ԴԱՍԱԿԱՆ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

Ա Ն Գ Ի Ր Ժ Ե Մ Ե Ն Ե Կ

ԳՐԵՑ

Հ. Յ. Վ. ՏԱՀԵԱՆ

Աննախընթաց գործ մը ձեռովն ու նիւթովը, ուր ընթերցողը պիտի գտնէ որոշ ու պայծառ յօրինուածութեամբ ի մի ամփոփուած ու իրարու շղթայուած տեսութիւններ ու կարծիքներ, որոնք յուզուած են թեր ու դէմ հայ լեզուի ծագման, ազգակցութեան, դասաւորման, զարգացման ու հետեւաբար հայ ցեղին համաշխարհի պատմութեան մէջ գրաւած տեղւոյն ու դիրքին շուրջ:

Հայը իբրեւ արիական ժողովուրդ ու համացեղ եւրոպական քաղաքակիրթ ազգերու ներկայացած է հոս ոչ միայն հայ լեզուին հնդեւրոպականի հետ ունեցած աղերսին մանրամասն քննութեամբ, այլ նաեւ մարդախօսական հետաքրքրական տուեալներով:

Հայ լեզուին պատմութիւնը՝ հայ ժողովրդեան պատմութեան հետ հիւսուած է. եթէ կը հետաքրքրուինք նախկին անգիր ժամանակներու մէջ հայուն վիճակուած ու հայուն կատարած դերովը, ահա՜ բարեպատեհ առիթը լիւրջ գոհացում տալու մեր այս գովելի հետաքրքրութեան:

Լոյս տեսած են Ա—Դ պրակները, 724 էջ:

Գինն է՝ 60 ֆր.: